

ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԳՅԱՆ

ԳՈՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ «ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ Ի ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆՆ ԳՈՐԹԻՒՐԻ» ԵՐԿԸ. ՏԵՔՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Դավիթ Անհաղթի հայերեն ժառանգությունը, ինչպես հաստատել է Ս. Արեւշատյանը, բաղկացած է չորս գրվածքից՝ «Փիլիսոփայության սահմանումներ», «Արիստոտելի Ստորագությունների (Կատեգորիաների) մեկնություն», այդ նույն ստորագությունների «Պորփյուրի «Ներածություն» վերլուծություն», «Արիստոտելի Վերլուծականի (Անալիտիկայի) մեկնություն»¹: Առաջին երեք գրվածքների հունարեն սկզբնագիրը պահպանվել է, վերջինի սկզբնագիր չկա, սակայն այն նույնպես ակնհայտորեն թարգմանված է հունարենից:

Ինչո՞ւ Ալեքսանդրիայի նորպլատոնական դպրոցի բոլոր ներկայացուցիչներից միայն Դավիթ գրվածքներն են թարգմանվել հայերեն. այս հարցին պատասխանելու համար բավարար փաստեր չկան: Հետազոտողները զանազան վարկածներ են առաջ քաշել: Ս. Արեւշատյանը համոզված է, որ Դավիթը հայ է եղել, Ալեքսանդրիայում ուսանելիս գրել է հունարեն, իսկ հետագայում վերադարձել է Հայաստան եւ, կամ ինքն է թարգմանել իր երկերը հայերեն, կամ էլ կազմակերպել է դրանց թարգմանությունը²:

Սրանք հայագիտության մեջ հայտնի փաստեր են: Հայտնի է նաեւ, որ Դավիթին վերաբերող հայկական ավանդությունը³, ըստ որի Դավիթը հայ փիլիսոփա էր, որեւէ աղբյուր չունի հունական աղբյուրներից հայտնի տվյալների

¹ Տե՛ս օրինակ, այդ չորս երկն ամփոփող հրատարակությունը՝ Դավիթ Անյաղթ, *Երկասիրությունք փիլիսոփայականք*, համահավաք քննական բնագրերը եւ առաջաբանը Ս. Ս. Արեւշատյանի, Երեւան, 1980: Միջնադարյան ավանդությունը Դավթին է վերագրել նաեւ Պորփյուրի «Ներածություն», Արիստոտելի «Կատեգորիաների» եւ «Յաղագս մեկնութեան», Արիստոտելին վերագրվող «Յաղագս աշխարհի» եւ «Յաղագս առաքինութեան» երկերի թարգմանությունն ու «Ի սուրբ խաչ աստուածընկալ» նառը, «Առածի հինգ Դարթի» եւ «Վասն բաժանման» մանր գրվածքները: Այս ավանդությունն արտացոլվել է Դավթի Անյաղթ փիլիսոփայի *Մատենագրությունք եւ Թողթ Գրտայ առ Դավիթ*, ի Վենետիկ, 1932, հրատարակության մեջ, որը կրկնությունն է Կորին վարդապետի, *Մամբրէ Վերծանողի եւ Դավթի Անյաղթի Մատենագրությունք*, Վենետիկ, 1833, հրատարակության:

² Ն. Ն. Ада́аф адо́й, *Օ́й д́и е́ди а́а́и е́а о́ е́и́ н́и о́ н́е́и́ е́ і а́о́е́ а́ а́д́а́а́и́ а́е́ А́д́и́ а́и́ е́е́ (V-VI а́а́.)*, *А́д́а́а́а́и́*, 1973, н. 325:

³ Այդ ավանդությունն ի մի է բերել Ժ.-Պ. Մահեն "David l'Invincible dans la tradition arménienne", in Simpicius, *Commentaire sur les Catégories*, traduction commentée sous la direction de Ilsetraut Hadot, fasc. 1, Leiden, New York, København, Köln: E.J. Brill, 1990, p. 189-207:

հետ⁴: Ս. Արեւշատյանը փորձել է, հաշտեցնելով այդ հակասական տեղեկությունները, վերականգնել Դավթի կենսագրությունը⁵: Պակաս հայտնին այն է, որ Դավթի հունարեն բնագրերը կրում են նույն վերնագրերը, արժարժում են նույն թեմաները, օգտագործում են հասկացությունների ու եզրերի նույն համակարգը, բերում են նույն օրինակները, ինչ եւ Ալեքսանդրիայի դպրոցի մյուս ներկայացուցիչների գրվածքները: Շատ հատվածներ նրանցում համարյա բացակայում են: Այդ գրվածքները նույն դասախոսությունների գրառումներն են: Դավթին ամենամոտ հեղինակը նրա ժամանակակից եւ աշակերտակից էլիասն է: Իզուր չէ, որ ժամանակին նրան են վերագրվել Դավթի վերը թվարկված չորս գործերից երկուսը՝ Արիստոտելի «Կատեգորիաների»⁶ եւ «Անալիտիկայի» մեկնությունները⁷: Սակայն բնագրային նմանությունների վրա հիմնված այս ենթագրությունները հերքվել են ինչպես բանասիրական փաստերով⁸, այնպես էլ տարբեր մոտեցումներով, որ Դավթին ու էլիասը ցուցաբերում են միեւնույն խնդիրների հանդեպ (օրինակ՝ արդյոք տրամաբանությունը փիլիսոփայության մաս է թե՞ գործիք)⁹:

Ի տարբերություն «Կատեգորիաների մեկնության», որը պահպանվել է միակ թերի ձեռագրով¹⁰, մյուս երեքի բազմաթիվ ձեռագրեր են պահպանվել: Իրանք պարունակող մի շարք ժողովածուներ կան, որոնցում Պորփյուրի «Նե-

⁴ Ռոնց համաձայն՝ նա էլիասի հետ մեկտեղ Ալեքսանդրյան դպրոցի 6-րդ դարի երկրորդ կեսի ներկայացուցիչ է. տվյալներն ամփոփված են R. Goulet (ed.), *Dictionnaire des philosophes antiques*, II, Paris, 1994, s.v. "David l'Invincible" (A. Ouzounian): Վեստերինկը նույնիսկ համարում է, որ Դավթը եղել է էլիասի հաջորդը, որն իր հերթին հաջորդել էր 565 թ. Ալեքսանդրիայի դպրոցի փիլիսոփայության ուսուցչի պաշտոնը թողած Օլիմպիոդորոսին, եւ «վերջին ալեքսանդրացի» Ստեփանոսի նախորդը, տե՛ս L. G. Westerink, "Elias on the Prior Analytics", in *Collected Papers of L. G. Westerink*, Amsterdam, 1980, p. 131:

⁵ Ս. Ս. Արեւշատյան, *Դավթի Անհաղթը հին Հայաստանի ականավոր փիլիսոփա*, Երեւան, 1980, էջ 30-36 («Կյանքն ու գործունեությունը» գլուխը):

⁶ Ինչպես հունարեն սկզբնագիրը (*Eliae (olim Davidis) in Aristotelis Categoriae commentarium*, in: *Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categoriae Commentaria*, ed. A. Busse (CAG, XVIII, 1) Berolini 1900), այնպես էլ հայերեն թարգմանությունը (*Մեկնությունը Ստորագրությանը Արիստոտելի ընծայեալ էլիասի իմաստասիրի, ի լոյս էաժ 3. Մանանդեան, Ս. Պետերբուրգ, 1911*):

⁷ Յ. Մանանդեան, *Յունարան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները*, Վիեննա, 1928, էջ 59-67, նաեւ M. G. Papazian, "The Authorship of an Armenian Commentary on Aristotle's *Prior Analytics*," *Journal of the Society for Armenian Studies*, vol. 10 (1998, 1999 [2000]), p. 55-62:

⁸ Ն. Ն. Աժաթ ձոյի, *նշվ. աշխ.*, էջ 273-280:

⁹ Ա. Թոփչյան, «Փիլոսոփայություններ Դավթ Անյաղթի Մեկնությունից ի Վերլուծական Արիստոտելի երկի մասին (կառուցուածքը, բովանդակությունը, լեզուն, թարգմանչի ու հեղինակի խնդիրները)».- «Հանդես ամսօրեայ», 2006, էջ 63-90:

¹⁰ Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև ՄՄ), ձեռ. № 1930:

րածություն» Դավթի վերլուծությունը հետեւում է մեկնվող երկի՝ Պորփյուրի «Ներածություն» թարգմանությունը, շատերում էլ դրանց նախորդում է Դավթի «Սահմանք իմաստասիրության»-ը: Այդ ձեռագրերից մի քանիսը, այլ երկերի թվում, պարունակում են նաև Դավթի՝ Արխատտելի «Անալիտիկայի» մեկ-նությունը:

Պորփյուրի «Ներածություն» Դավթի վերլուծության հիսուն ձեռագիր ենք ուսումնասիրել (46 Մատենագարանի¹¹, 2 Փարիզի¹², 2 Վիեննայի¹³), որոնք միօրինակ բնագիր են պարունակում: Գլուխների բաժանումն էլ նույնն է: Տարբերությունները հիմնականում գրչական բնույթի են: Որոշ ձեռագրերում պարունակվող մի շարք տարբերություններ հաստատվում են հունարենով եւ թույլ տալիս առանձին ուղղումներ առաջարկել հրատարակված տեքստին: Ամենից կարեւորն այս առումով Մատենագարանի № 1746 ձեռագիրն է, որ ամենից մեծ թվով ճիշտ ընթերցումներ է պարունակում:

Հունարեն երեք ձեռագրերից, որոնց հիման վրա կազմված է Բուսսեի քննական հրատարակությունը, V (Vaticanus N 1470) ձեռագիրն է, որ բոլորից շատ ընդհանուր ընթերցումներ ունի հայերեն թարգմանության հետ. երեսուներեք դեպքում այն միայնակ է հաստատում հայերենի ընթերցումները, երեք դեպքում՝ K (Marcianus 539) ձեռագրի եւ վեց դեպքում՝ T (Vaticanus N 1023) ձեռագրի հետ համատեղ: Միայն T ձեռագրի ընթերցումներն են համապատասխանում հայերենին ինն անգամ, միայն K-ն՝ յոթ անգամ, եւ այդ երկուսը համատեղ, ի հակադրություն V-ի՝ վեց անգամ:

Անդրադառնանք Պորփյուրի «Ներածություն» Դավթի վերլուծության հունարեն սկզբնագրի եւ հայերեն թարգմանության բաղադրությունը¹⁴: Դավթի երկը նվիրված է Պորփյուրի արձարձած հինգ եզրերի քննարկմանը. դրանք են՝ «սեռ», «տեսակ», «տարբերություն», «յատուկ», «պատահում»:

¹¹ ՄՄ, ձեռ. №№ 1746, 1716, 2326, 1766, 1751, 1748, 6897, 1715, 8722, 1753, 8522, 1813, 1809, 1500, 1744, 1916, 2368, 3914, 1742, 1739, 1750, 1738, 2364, 1810, 1811, 3130, 2293, 1687, 3501, 1688, 1765, 4027, 1858, 1691, 1808, 1826, 2652, 1692, 1812, 1996, 3683, 5033, 8214, 1740, 1763, 4008, 4006:

¹² ՄՄ, ձեռ. №№ 263 եւ 656:

¹³ ՄՄ, ձեռ. №№ 240 եւ 242:

¹⁴ Բացի Վենետիկի վեռնիշյալ հրատարակություններից (ծմբ. 1) եւ Դավթի շոքս երկի՝ Արեւշատյանի համահավաք հրատարակությունից, էջ 103-192 (ծմբ. 2), պետք է նշել 18-րդ դարի հետեւյալ հրատարակությունը՝ Գիրք Պորփյուրի որ կոչի ներածություն, չորում պարունակին վերծանությունք ամէնիմաստ Դավթի Անյաղթ փիլիսոփայի եւ լուծմունք ներածութեան Սրբոյն Գրիգորի Տաթեւացոյ, Մադրաս, 1793, էջ 69-323: Բաղդատությունը հիմնված է հետեւյալ հրատարակության վրա՝ Դավթի Անյաղթ, Վերլուծություն «Ներածութեանն» Պորփյուրի, համահավաք քննարկը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Ս. Արեւշատյանի, Երեւան, 1976:

Պորփյուրի «Ներածություն» հունարեն մեկնություններ, բացի Դավթից, գրել են նաև Ամմոնիոսը (5-6 դ.դ.)¹⁵, վերոհիշյալ էլիասը (6 դ.)¹⁶։ գոյություն ունի նաև մեկ այլ՝ այսպես կոչված, կեղծ-էլիասի (կեղծ-Դավթի) մեկնություն¹⁷։ Պահպանվել է նաև հունարեն մի անանուն մեկնություն, 6-րդ դարի հեղինակ Բոեթիուսի երկու լատիներեն մեկնություն, ասորերեն մեկնությունների պատառիկներ, ասորերեն սխոլիաների մի ժողովածու եւ այլն¹⁸։

Վերոհիշյալ երեք հունարեն մեկնությունները սկսվում են շատ ծավալուն ներածություններով, որոնց բովանդակությունը համապատասխանում է Դավթի «Սահմանք իմաստասիրութեան» երկին՝ փաստորեն, Ամմոնիոսը, էլիասը եւ կեղծ-էլիասը մեկ գրվածքի մեջ ամփոփել են Դավթի երկու գրվածքների նյութը։ Իսկ Դավթի խնդրո առարկա մեկնությունը սկսվում է մեկնվող երկի նպատակի («գիտաւորութիւն» – ὁ σκοπός), օգտակարության («պիտանացու» – τὸ χρήσιμον), վերնագրի պատճառաբանվածության («պատճառ մակագրութեան» – ἡ αἰτία τῆς ἐπιγραφῆς), վավերականության («հարազատութիւն» – τὸ γνήσιον), գլուխների բաժանման («գ'ի գլուխս բաժանումն» – ἡ εἰς τὰ κεφάλαια διαίρεσις), նյութի դասավորության («կարգ» – ἡ τάξις), ուսուցման եղանակի («վարդապետական եղանակ» – ὁ διδασκαλικὸς τρόπος) եւ այն հարցի, թե փիլիսոփայության ո՞ր բնագավառին է վերաբերում սովյալ երկը («առ ինչ մասն վերաբերումն» – ἡ ὑπὸ τι μέρος ἀναφορά), ավանդական քննարկմամբ։ Նույնպիսի հարցեր են արծարծված Դավթի՝ Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնության սկզբում։

Հայերեն եւ հունարեն տեքստերի համեմատությունից պարզվում է, որ մի կողմից թարգմանությունը բառացի է, հունաբան (պատկանում է հունաբան դպրոցի երրորդ խմբին)¹⁹, մյուս կողմից՝ երկուսի միջև զգալի տարբերություններ կան, այդ թվում՝ հայերենում հունարենի համեմատ պակասում են մեծ ու փոքր հատվածներ, որոնք երբեմն ամբողջական էջեր են կազմում, նույնիսկ

¹⁵ *Ammonii in Porphyrii isagogen sive quinque voces*, ed. A. Busse (CAG, IV 3), Berlini 1891.

¹⁶ *Eliae in Porphyrii isagogen et Aristotelis categorias commentaria*, ed. A. Busse (CAG, XVIII, 1), Berlini 1900.

¹⁷ Pseudo-Elias (Pseudo-David), *Lectures on Porphyry's Isagoge*, Introduction, text and indices by L.G. Westerink, Amsterdam 1967: Ձեռագրերից մի ֆանիտում այս մեկնությունը կրում է Դավթի անունը (նույն տեղում, էջ VII-VIII): Վեստերինկի կարծիքով հեղինակը ո՛չ էլիասն է, ո՛չ էլ Դավթի, այլ դարձյալ Օլիմպիոդորոսին հաջորդած եւ նույն կրթական ավանդույթը ներկայացնող մի մեկնիչ (նույն տեղում, էջ XI-XVI):

¹⁸ Porphyry, *Introduction*, translated, with a Commentary by Jonathan Barnes, Clarendon press, Oxford 2006, p. xx-xxi, and n. 47.

¹⁹ **Յ. Մանանդեան**, *Յունաբան դպրոցը եւ նրա զարգացման շրջանները*, Վիեննա, 1928, էջ 142-173, **Ռ. Ռ. Ածաթ Թոյ**, նշվ. աշխ., էջ 186-187:

գլուխներ՝ գլուխ 11 եւ 18, կան եւ մեծ ու փոքր հատվածների հավելումներ, տարբեր է գլուխների բաժանումն ու համարակալումը. այսպես, հունարեն տեքստը սկսվում է չորս ներածական գլխով, այնուհետեւ գալիս է բուն տեքստի առաջին գլուխը, որը համապատասխանում է հայերենի հինգերորդ գլխին, իսկ որոշ գլուխներ համապատասխանում են հունարենի 2 կամ 3-ական գլուխներին²⁰: Հունարեն տեքստում գլուխները եզրափակվում են միօրինակ նախադասություններով, որոնց հայերեն համարժեքն է «Ընդ այսուհի հանդերձ աստուծով առաջիկայ գործաւորութիւն» կամ «պրակ» կամ «տեսութիւն»: Դրանք ձեռագրերում գրվել են կարմիրով եւ, ընկալվելով որպէս հաջորդ գլխի վերնագիր, այդպէս էլ վերնագրերի տեսքով հանդես են գալիս Վենետիկի հրատարակությունների մեջ, մինչդեռ Արեւշատյանն իր հրատարակություններում հունարենի հետեւությունները գետեղել է դրանք գլուխների վերջում: Նշենք, որ «տեսութիւն»-ը հունարեն Θεωρία-ն է, որ սովյալ դեպքում նշանակում է դասախոսություն, «պրակ»-ը Πράξις բառի տառագարծություն կամ փոխառություն (սովյալ դեպքում գործնական պարապմունք), իսկ «գործաւորութիւն»-ը՝ նույնի թարգմանություն: «Առաջիկայ» բառը հունարեն παρών-ի համարժեքն է, որ նշանակում է ոչ թե հաջորդ, այլ ներկա եւ իրականում վերաբերում է ոչ թե հաջորդ, այլ սովյալ գլխի նախորդ շարադրանքին: Նման հատվածներով են եզրափակվում նաեւ «Փիլիսոփայության սահմանումների» եւ «Վերլուծականքի մեկնության» բոլոր գլուխները:

Թարգմանությունն այնքան բառացի է, որ երբեմն տուժել է իմաստը: Օրինակ՝ «պատահումն» եզրը բնորոշվում է որպէս «քառափաղառական» (Դ. Պորփ. 190.18-19), այսինքն՝ քառավանկ, մինչդեռ այն եռավանկ է, որովհետեւ հունարեն համապատասխան բառը՝ συµβεβηκός (Dav., in Isag, 210.24-25) քառավանկ է: Սակայն երկու նմանօրինակ դեպքերում «սեռ» բառը ճիշտ բնորոշված է որպէս միավանկ, մինչ յένος բառը երկվանկ է τὸ εἶναι[...] δισύλλαβον, τὸ καλεῖσθαι αὐτὸ γένος (Dav., in Isag, 210.15-16) – «գմի-ափաղառական գոլ, եւ կամ զկոշիլն նմա սեռ» (Դ. Պորփ., 190.6) – «նրա երկվանկ / միավանկ լինելը կամ սեռ կոշվելը» (հմմտ. նաեւ Dav., in Isag, 210.18 – Դ. Պորփ., 190.9):

Դավթի խնդրո առարկա բնագրում բազմաթիվ մեջբերումներ կան Պորփյուրի «Ներածությունից»: Հայերեն թարգմանության մեջ այդ մեջբերումները մեծ մասամբ համընկնում են Պորփյուրի հայերեն տեքստի հետ: Կարելի է ենթադրել, որ Դավթի մեկնության թարգմանիչն աչքի առաջ է ունեցել Պոր-

²⁰ Հայերենի «Պրակ Զ» համապատասխանում է հունարենի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ գլուխներին, «Պրակ ԺԱ» հունարենի 9-րդ եւ 10-րդ գլուխներին, «Պրակ ԺԳ»՝ 13-րդ եւ 14-րդ գլուխներին, «Պրակ ԺԸ»՝ 19-րդ եւ 20-րդ գլուխներին:

փյուրի «Ներածությունը», կամ որ մեջբերումները թարգմանվել են անկախ, իսկ մի ուշ խմբագիր համապատասխանություն է բերել մեջբերումները Պորփյուրի «Ներածության» թարգմանության հետ:

Այն դեպքերում, երբ հունարեն մեջբերումները տարբերվում են Պորփյուրի տեքստից, այդ նույն տարբերություններն են ցուցաբերում Պորփյուրի եւ Դավթի հայերեն թարգմանությունները, օրինակ՝ διαφορά ἐστίν ἢ περισσεύει τὸ εἶδος τοῦ γένους (*Porph.*, Isag 10.22-23, «տարբերությունն այն է, որով տեսակը գերազանցում է սեռին») = «տարբերութիւն է՝ որով առաւելու տեսակն քան գսեռն» (Պորփ., 143), եւ λέγεται τοίνυν διαφορά ἢ περιττεύει τὸ εἶδος τοῦ γένους (*Dav.*, in Isag, 187.7-8, «Այսպիսով տարբերություն է կոչվում, որով տեսակը գերազանցում է սեռին») = «Արդ, ասի տարբերութիւն, որով առաւելու տեսակն քան գսեռն» (Գ. Պորփ., 136.13-14):

Որոշ դեպքերում հունարեն «Ներածության» հատվածներն ու Դավթի մոտ դրանց մեջբերումները նույնանում են, իսկ հայերեն համապատասխան հատվածների միջև տարբերությունները զուտ գրչական բնույթի են, օրինակ՝ Τῶν κατηγορουμένων τὰ μὲν καθὸ ἑνὸς λέγεται μόνου (*Dav.*, in Isag, 139.17-18 = *Porph.* Isag, 2.17) = «Քանզի ստորոգիցելոյն է ինչ՝ որ զմիոջէ ասի միայնոյ» (Պորփ., 135), եւ «Քանզի ստորոգիցելոյն է ինչ որ զմիոջէ ասի միայնոյ» (Գ. Պորփ., 76.18): Միմյանցից տարբերվում են ընդգծված բառերի վերջավորությունները՝ «-ոյ» անցյալ դերբայի կանոնավոր եզակի սեռական է, իսկ «-ոյր»՝ հունաբան թարգմանիչների ստեղծած սեռականի արհեստական վերջավորությունն է, այն տրականից տարբերակելու համար²¹:

Երբեմն մեջբերումներն ու «Ներածության» համապատասխան հատվածները հիմնականում նույնն են, սակայն մանրամասների մեջ կարելուր տարբերություններ կան, որոնք վկայում են նորովի թարգմանության մասին. ὅλως (*Porph.*, Isag, 1.5-6 = *Dav.*, in Isag, 97.1-3) = «բոլորովին» (Պորփ., 133), եւ նրան հոմանիշ «ամենեին» (Գ. Պորփ., 28.4), ὁρίζονται δέ (*Porph.*, Isag, 11.7 = *Dav.*, in Isag, 195.30) – «եւ որոշեն» (Պորփ., 143) եւ «բայց սահմանեն» (Գ. Պորփ., 156.21), τὸ χωρίζειν (*Porph.*, Isag, 11.18-19 = *Dav.*, in Isag, 196.18) = «մեկնելն» (Պորփ., 144) եւ «անջատելն» (Գ. Պորփ., 156.31), χωρίζόντων (*Porph.*, Isag, 12.2 = *Dav.*, in Isag, 199.11) – «մեկնողացն» (Պորփ., 144) եւ «անջատողացն» (Գ. Պորփ., 164.2):

Դավթի թարգմանիչն ուղղել է Պորփյուրի թարգմանչի մի սխալը՝ τὸ εἰ-δικώτατον (*Porph.*, Isag, 4.13 = 6.12-13, *Dav.*, in Isag, 162.22, 27) –

²¹ Կանոնավոր *n*-ին ավելացրած *p* տարբը դեռանվանական հոլովումից է, հմմտ. այս - այսր, նա - նորա, *n* - ոյր:

«յատկագոյն», «յատկագոյնսն» (Պորփ., 136, 138-139, որ արդյունք է Յի երկհնչունի պարզեցված՝ *Ι ρնթերցման, որպես τὰ ἰδικώτατα*²²), փոխարինված է օրինաչափ «տեսակագոյն», «տեսակագոյնսն» թարգմանություններով (Դ. Պորփ., 100.26, 102.1):

Երբեմն հունարեն հատվածների միջև տարբերություններն արտացոլված չեն հայերեն թարգմանություններում՝ Դավթի հայերեն մեջբերումները տարբերվում են իրենց հունարեն սկզբնագրից եւ համընկնում են Պորփյուրի հայերեն տեքստի հետ. τὰ συμβεβηκότα γίνεται καὶ ἀπογίνεται χωρὶς τῆς τοῦ ὑποκειμένου φθορᾶς (Dav., in Isag, 168.27-28), *հմտ.* Συμβεβηκὸς δέ ἐστὶν ὃ γίνεται καὶ ἀπογίνεται χωρὶς τῆς τοῦ ὑποκειμένου φθορᾶς (Porph., Isag, 12.24-25) = «Պատահումն է որ լինի եւ բացալինի առանց ենթակային ապականութեան» (Դ. Պորփ., 108.25²³ = Պորփ., 145): Այսպիսի փաստը կարող է վկայել այն մասին, որ մի խմբագիր հետագայում ուղղել է մեջբերումը՝ համապատասխանեցնելով այն Պորփյուրի հայերեն տեքստին:

Պորփյուրի հայերեն թարգմանությունը, ինչպես եւ Արիստոտելի «Ստորոգությունների» եւ «Յաղագս մեկնութեան» երկի, պատկանում են հունաբան դպրոցի երկրորդ շրջանին, իսկ Դավթի երկերը թարգմանվել են երրորդում²⁴, ուրեմն թարգմանիչներն էլ տարբեր մարդիկ են: Այդ տեքստերը թարգմանական տեխնիկայով եւ հետեւաբար լեզվական առանձնատկություններով տարբերվում են միմյանցից: Այնուամենայնիվ, Դավթի թարգմանիչը լայնորեն օգտագործել է «Ներածության» (նաեւ «Ստորոգությունների») մեջ հանդիպող հունաբան բառեր եւ հատկապես եզրեր, եւ սա չի կարելի բացատրել որպես ուշ խմբագրի աշխատանքի, այլ միայն Պորփյուրի հայերեն տեքստն աչքի առջև ունենալու արդյունք: Ահա մի քանիսը.

ἀλλοῖον (Porph., Isag, 8.18-9, Dav., in Isag, 181.10) = «այլայլակ» (Պորփ., 141, Դ. Պորփ., 128.3),

ἀπειρος (Porph., Isag, 6.12-13, Dav., in Isag, 110.9) = «անհուն» (Պորփ., 139, Դ. Պորփ., 40.14),

ἀπόδειξις (Porph., Isag, 1.5-6, Dav., in Isag, 88.14) = «ապացոյց» (Պորփ., 133, Դ. Պորփ., 16.24),

²² Այդ մասին տե՛ս նաեւ R. Sgarbi, *Osservazioni sul testo e sulla lingua della versione armena dell' "Isagoge" di Porfirio* (Memorie dell' Istituto Lombardo - Accademia di scienze e lettere, classe di lettere - scienze morali e storiche, vol. XXXI, fasc. 5), Milano 1972, p. 398-399:

²³ Հունարեն Դավթի ճշգրիտ թարգմանությունը կլինեւ. «*Պատահումնքն լինին եւ բացալինին առանց ենթակային ապականութեան»:

²⁴ Յ. Մանանդեան, նշվ. աշխ., էջ 142-173, C. C. Ἀδάσο ἀδύϊ, նշվ. աշխ., էջ 187:

ἀπόδοσις (*Porph.*, Isag, 1.5-6, *Dav.*, in Isag, 88.14) = «բացատրութիւն» (*Պորփ.*, 133, Գ. Պորփ., 16.24),
 γενικώτατος (*Porph.*, Isag, 1.5-6, *Dav.*, in Isag, 87.7) = «սեռակա- նագոյն» (*Պորփ.*, 133, Գ. Պորփ., 14.10),
 εἰδικώτατος (*Porph.*, Isag, 4.13-14, *Dav.*, in Isag., 87.18) = «սեսա- կագոյն» (*Պորփ.*, 146, Գ. Պորփ., 84.17),
 εἰδοποιός (*Porph.*, Isag, 8.15-16, *Dav.*, in Isag., 177.3) = «սեսակա- րար» (*Պորփ.*, 141, Գ. Պորփ., 188.15),
 ψιλλὴ ἐπίνοια (*Porph.*, Isag, 1.10-11, *Dav.*, in Isag, 110.24) = «սոսկ մտածութիւն» (*Պորփ.*, 133, Գ. Պորփ., 40.22),
 ἡ ἰδιαίτατα (διαφορά) (*Porph.*, Isag, 8.19, *Dav.*, in Isag, 179.1) = «յատկեղ (տարբերութիւն)» (*Պորփ.*, 141, Գ. Պորփ., 122.18),
 ἰδιότης (*Porph.*, Isag, 7.21-23, *Dav.*, in Isag, 204.20) = «յատկու- թիւն» (*Պորփ.*, 140, Գ. Պորփ., 174.29),
 ὑπογραφή (*Porph.*, Isag, 3.19-20, *Dav.*, in Isag, 94.1) = «ենթագրու- թիւն» (*Պորփ.*, 136, Գ. Պորփ., 24.26),
 ὑφίσταμαι (*Porph.*, Isag, 1.10-11, *Dav.*, in Isag, 110.24) = «են- թակայանամ» (*Պորփ.*, 133, Գ. Պորփ., 40.24),
 ἄτομος = «անհատ» (*ստեպ*), ἀχώριστος = «անանջատական» (*ստեպ*), γένος = «սեռ» (*ստեպ*), διαφορά = «տարբերութիւն» (*ստեպ*), εἶ- δος = «սեսակ» (*ստեպ*), ἴδιον = «յատկ» (*ստեպ*), κατηγορούμενοι = «ստորոգեալ» (*ստեպ*), συμβεβηκός = «պատահումն» (*ստեպ*), χωριστός = «անջատական» (*ստեպ*):

Դավթի Մեկնութեան վերջին հատվածը նվիրված է վերոհիշյալ հինգ եզ- րերի նմանություններին ու տարբերություններին: Հունարեն բնագիրը պարու- նակում է միայն «սեռ»-ի բաղդատությունը մնացած չորսի հետ (*Dav.*, in Isag, 208.1-218.31). այն եզրափակվում է հետագա բաղդատության մասին ընդ- հանուր համառոտ դատողություններով (*Dav.*, in Isag, 218.32-219.25), ինչի փոխարեն հայերենում մյուս եզրերը համեմատված են մնացածների հետ (Գ. Պորփ., 200.2-202.23): Դավթի մեկնության հունարեն տեքստի վերջին էջերը բացակայում են հրատարակության մեջ. հրատարակիչ Բուսսեն նշում է, որ շարունակությունը նույնն է էլիասի նույնանուն երկի վերջավորության հետ²⁵: Հայերեն համապատասխան հատվածը կարելի է բնորոշել որպես Պորփյուրի «Ներածության» (*Porph.*, Isag, 18.10-22.13), կամ էլ նրա՝ էլիասի մեկնու-

²⁵ Elias, in Isag, 100.27-107.1. Բուսսեն ընդհատում է Դավթի տեքստն այստեղ (*Dav.*, in Isag, 219.25) ծանոթագրության մեջ ավելացնելով. "reliqua cum Elia congruunt":

թյան համապատասխան հատվածների համառոտ տարբերակ: Սակայն հայերեն հատվածին ամենից նման հունարեն հատված գտանք ուղղափառ եկեղեցու սյուններից մեկի, աստվածաբանական գրվածքներով հայտնի Հովհաննես Դամասկացու (7-8-րդ դդ.) *Dialectica* երկում (*Damasc., Dial, 24.1-29.9*), որի մասին հույն բյուզանդագետ Լինոս Բենակիսը գրել է, թե նա մեջբերումներ ունի Դավիթ Պորփյուրի «Ներածություն» հունարեն մեկնությունից²⁶: Դամասկացու առանձին նախադասություններ կարծես Դավիթ հայերեն նախադասությունների սկզբնագիրը լինեն, օրինակ՝ «Հասարակութիւն տարբերութեան եւ տեսակի՝ եթէ հանգիտաբար ունականան, եթէ միշտ առընթեր գոն՝ որոց ընդունական գոն» (Դ. Պորփ., 200.2-4) = Κοινὰ διαφορᾶς καὶ εἰδους· ὅτι ἐπίσης μετέχονται· ὅτι ἀεὶ πάρεστιν, οἷς μετέχονται (*Damasc., Dial, 24.2-3*)²⁷: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ Դավիթ մեկնություն վերջավորությունը համարյա անաղարտ պահպանվել է հայերեն թարգմանության մեջ, իսկ հունարեն սկզբնագրում այն համառոտվել է:

«Ներածություն» մեկնության հունարեն սկզբնագրի եւ հայերեն թարգմանության միջև տարբերությունները շատ ավելի բազմաթիվ ու էական են, քան հունարեն եւ հայերեն ձեռագրերի տարբերությունները: Ամենից աչքի զարնողը հայերեն շարգմանված հունարեն մեծ ու փոքր հատվածներն են: Տարբերությունները կարող են ունենալ երեք հնարավոր բացատրություն. ա. ազատ թարգմանության տարրեր կամ թարգմանչի սխալներ, բ. փոփոխություններ հունարեն տեքստի պատմության ընթացքում, գ. փոփոխություններ հայերեն տեքստի պատմության ընթացքում:

1. Հայերեն թարգմանության կրած բացահայտ փոփոխություններ

Երբեմն ակնհայտ է, որ երկու տեքստերի տարբերությունները հայերեն թարգմանության փոփոխության հետեւանք են, սակայն հաճախ դժվար է լինում տարբերակել թարգմանչի, թե հետագա խմբագրի ձեռքի գործն է դա: Այնուամենայնիվ երբեմն դա հնարավոր է:

1.1. Թարգմանչի ներմուծած փոփոխությունները

ա) Փոփոխության պատասխանատուն կարելի է համարել թարգմանչին հատկապես այն դեպքերում, երբ նա բառեր է ավելացրել բառացի թարգմանությունը բացատրելու համար, կամ էլ մեկ բառը թարգմանել է հոմանիշների զույգերով: Օրինակ՝ ἔμφυχός (*Dav., in Isag, 88.15*) – «ներանձնական [...]»

²⁶ Լ. Բենակիս, «Դավիթ հայր Արիստոտելի բյուզանդական մեկնիչների երկերում». – «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 1, էջ 46-55:

²⁷ Պորփյուրի եւ էլիասի համապատասխան հատվածներն (*Porph., Isag, 18.10-14, Elias, in Isag, 101.2-7*) ավելի երկար են՝ նույն այդ երկու ընդհանուր գծերը («հասարակութիւնը») լուսաբանված են օրինակներով:

այս ինքն շնչական» (Գ. Պորփ., 16.25-26): Առաջին համարժեքը հունարեն բառի պատճենումն է, որ հանդիպում է եւ այլ հատվածներում (օրինակ, *Porph.*, *Isag*, 10.6 – Պորփ., 142), իսկ երկրորդը՝ նրա սովորական հայերեն համարժեքը: Նման դեպքեր են՝ ա) διακρίνει (*Dav.*, in *Isag*, 133.19) – «տարադատէ, այս ինքն որոշէ» (Գ. Պորփ., 68.16-17), բ) τὸ φλεβότομον (*Dav.*, in *Isag*, 100.27) – «երակահատն» (Գ. Պորփ., 32.24 պատճենում), որին հաջորդ նախադասության մեջ հետևում է ἑαυτό («ինքը»), որին հայերենում համապատասխանում է «նշտրակ» բառը, գ) ποῖον (*Dav.*, in *Isag*, 195.29) – «որակ [...] այս ինքն որպիսութիւն» (Գ. Պորփ., 156.20), եւ այլն: Մյուս դեպքերում գործ ունենք հոմանիշների զույգերի հետ, օրինակ, ὀριστή (*Dav.*, in *Isag*, 138.27) = «որոշեալ եւ սահմանեալ» (Գ. Պորփ., 74.27-28):

2) Սովորական է «գոյեղք» («էական»՝ τὰ οὐσιώδη) – «մակագոյեղք»²⁸ («վերէական»՝ τὰ ἔπουσιώδη) հակադրությունը, սակայն մեկ անգամ ունենք «յատկեղք»²⁹ – «մակագոյեղք» (Գ. Պորփ., 166.17-19)՝ որպես հունարեն նույն եզրերի համարժեք (*Dav.*, in *Isag*, 201.1-2). ակնհայտ է, որ «գոյեղք»-ի փոխարեն է սխալմամբ հայտնվել «յատկեղք»:

Հունարեն սկզբնագրի հայերեն համարժեք չունեցող հատվածների մեծ մասը, թվում է, բաց է թողնվել թարգմանության ընթացքում³⁰:

1.2 Հայերեն բնագրի պատմության ընթացքում կատարված փոփոխություններ

1) Հայերեն տեքստի որոշ հավելումներ, որոնք նախորդող հատվածների կրկնությունը կամ ամփոփումն են, կարող են հայ խմբագիրների աշխատանքի արդյունք լինել:

Օրինակ՝ «եթէ Արիստոտելի Ստորոգութիւնքն յամենայն իմաստասիրութիւն պիտանանան» (Գ. Պորփ., 14.31-32) կրկնվում է մեկ նախադասություն անց (Գ. Պորփ., 14.34-35), մինչդեռ միայն առաջին դեպքում այն ունի հունարեն համարժեք (*Dav.*, in *Isag*, 86.24-25):

Մեկ այլ դեպքում կարողում ենք. «եւ արդ այսոքիկ յաղագս ոչ գոլոյ գէական սեռ» (Գ. Պորփ., 92.25, հունարեն համարժեք հմմտ. *Dav.*, in *Isag*, 156.30), սակայն մի խմբագիր համարյա նույն միտքն է ներմուծել սրանից առաջ. «Ապա ուրեմն յասացելոցս երեւի, թէ ոչ կարող գոյ էական սեռ գոլ» (Գ. Պորփ.,

²⁸ Հմմտ. Գ. Պորփ., 120.15, 16, 18, 25, 122.9, 124.3, 5, 17, 126.25, 26, 28, 136.12, 148.1, 160.6, 20:

²⁹ Այն համարժեքն է հունարեն ἡ ἰδιαίτητα (διαφορά)-ի (*Dav.*, in *Isag*, 173.14 – Գ. Պորփ., 112.11՝ «առավել հատուկ (տարբերություն)»):

³⁰ Առնվազն այն հատվածները, որոնց հարազատությունը հունարեն նախնական բնագրին ապացուցվում է այլ մեկնություններում զուգահեռ հատվածների առկայությամբ, տե՛ս ստորև:

92.24-25՝ հունարենում համարժեք չունի):

Խմբագրի հավելում է թվում եւ «հոմանունութիւն մայր է մոլորութեան եւ երկբայութեան» (Դ. Պորփ., 58.14-15) նախադասութիւնը. հունարենի համապատասխան հատվածում (*Dav., in Isag, 122.32*) այն համարժեք չունի:

2) Աշակերտների՝ սեփական գրվածքներն իրենց ուսուցիչներին վերագրելու սովորութի մասին պատմող հատվածին (ինչպես Պյութագորասի հետեւորդներինը՝ Պյութագորասին), ավելացված է. «որպէս Պղատոն զՍոկրատայն»³¹ (Դ. Պորփ., 6.10-11): Սա հավանաբար ուշ հավելում է: Այդ հավելման աղբյուրը, հնարավոր է, Դավթի Արիստոտելի «Ստորոգութիւններ» մեկնութեան համանման հատվածն է, որտեղ կարդում ենք. «կամ յաղագս բարեմտութեան աշակերտաց, որք զԻւրեանց շարագրածութիւնս իւրեանց վարդապետացն ձանեցին, որպէս պատճառաց բարեաց, որպէս Պիւթագորի եւ Սոկրատայ Պիւթագորականաց եւ Սոկրատականաց» (Դ. Ստոր., 222): Այս հատվածը բավական ճշգրիտ համապատասխանում է հունարեն սկզբնագրին (*Dav., in Cat, 128.2-5*):

1.3 Երկիմաստ դեպքեր

Սրանք այն դեպքերն են, որոնց համար հայերեն եւ հունարեն տեքստերի տարբերութեան պատճառը բացատրելու համար որեւէ կռվան չկա:

1) «Մարդ, ձի» օրինակին ավելացրած է «արծուի» օրինակը (Դ. Պորփ., 8.31, 10.9, 38.11, 54.9, 70.8, 92.21, 156.7): Դավթի «Սահմանք իմաստասիրութեան»-ում նույնպես կարդում ենք. «մարդ, ձի, արծուի» (Դ. Սահմ., 4.2), մինչդեռ հունարենն է ἀνθρωπος ἢ βοῦς (*Dav., Prol, 1.21*՝ «մարդ կամ արջառ»):

2) Հունարեն ἵπποκένταυρος (*Dav., in Isag, 84.5-6, 7*՝ «ձիակենտավրոս») թարգմանված է «ձիակապիկն եւ եղջերուաքաղն» (Դ. Պորփ., 8.33): Հավանաբար «ձիակապիկ»-ը թարգմանչի հորինած արհեստական նորաբանութիւնն է, իսկ «եղջերուաքաղ» բառը (Դ. Պորփ., 38.6, 50.8, 52.10) պատճենումն է τραγέλαφος (*Dav., in Isag, 108.26, 116.13, 117.23*՝ «այծեղջերու») բառի: Մեկ անգամ էլ հանդիպում է «արալէզ» (Դ. Պորփ., 68.8) առանց համարժեքի հունարենում:

Դավթի «Սահմանք»-ում նույնպես այս առասպելական էակների անունների շփոթութիւնն է դիտվում. ἵπποκένταυρος (*Dav., Prol, 21.7*) – «արալէզն եւ եղջերուաքաղն» (Դ. Սահմ., 50.24), τραγέλαφος ἢ ἵπποκένταυρος (*Dav., Prol, 47.1*) – «եղջերուաքաղն» (Դ. Սահմ., 108.17), τραγέλαφος

³¹ Այս հատվածի հունարեն համարժեքը կլինէր. *ὥσπερ Πλάτων τὸ Σωκράτους ἐπὶ οἰκέων συγγραμμάτων ἐπέγραψεν (ըղատառ շարվածով բառերը մեր վերականգնածն են, մնացածները՝ Դավթի առկա տեխտից):

(*Dav., Prol, 1.17*) – «եղջերուաքաղն եւ արալէզն» (Գ. Սահմ., 1.22): Այսպիսով, Ռ. Թոմսոնի պնդումն այն մասին, որ այս տեքստում *τραγέλαφος* թարգմանված է հայկական առասպելական «արալէզ» էակի անվամբ³², որոշ ճշգրտման կարիք ունի:

Ուշագրավ է, որ «Սահմանք»-ում Թոմսոնի նկատած որոշ օրինակների «հայացման» մնացած դեպքերը զուգահեռ չեն գտնում մեր «ներածություն վերլուծության» մեջ. «պոետ» (*Dav., Prol, 14.35*) թարգմանված է «Հոմերոս» (Գ. Սահմ., 34.34), «Հեկտոր» անունը (*Dav., Prol, 62.20*) փոխարինված է «Տիգրան»-ով (Գ. Սահմ., 130.34), նյումփաների (*Dav., Prol, 16.2*) փոխարեն՝ «հրեշտակք եւ դեւք» (Գ. Սահմ., 38.12),³³ աղետների թվին (*Dav., Prol, 33.22*) ավելացված է երկրաշարժը (Գ. Սահմ., 76.30), թարգմանության մեջ բացակայում են մարմնամարզության եւ Ալիբեհադեսի անվան հիշատակումները, եւ այլն:³⁴

Մեր քննության առարկա հայերեն թարգմանության մեջ պահպանված են անտիկ աշխարհի հեղինակների, փիլիսոփաների, պատմական եւ դիցաբանական անձանց հետեւյալ հիշատակումները՝ «Պիսիստրատոս» եւ «տաղք հոմերականք» (Գ. Պորփ., 4.36-6.6՝ խոսքը Հոմերոսի պոեմների մասին է), Պիսիստրատոս եւ Դիոնիսիոս (Գ. Պորփ., 16.37-18.3, 18.21-23), Պիթիա (Գ. Պորփ., 22.19), Հերակլիտոս (Գ. Պորփ., 34.20), «Գալինայինք ասացուածքն»

³² David the Invincible Philosopher, *Definitions and Divisions of Philosophy*, translated by B. Kendall and R.W. Thomson (*University of Pennsylvania, Armenian Texts and Studies*, 5, Series editor M.E. Stone), Chico, CA 1983, p. XIX-XX, հմմտ. R. Thomson, "Notes on the Armenian Version of David the Invincible's *Definitions of Philosophy*," *Գալիթ Անհաղթը՝ հին Հայաստանի մեծ փիլիսոփան (Ջեկուցումներ՝ կարգացած Գալիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակին նվիրված երեւանում կայացած գիտական կոնֆերանսում)*, Երեւան, 1983, էջ 292, որտեղ նա մեկնաբանում է *արալէզ* բառն այս կոնտեքստում որպէս հունարեն սկզբնաբոյ երկու մյուս օրինակների համարժեք. դրանք են *σκινδαψός* («երաժշտական գործիք, իմաստագործի բառ») and *βλίτυρι* («տավղի լարի արձակած ձայնը. իմաստագործի ձայն»):

³³ Իրիվ նախադասությունն է. «Ոչ միայն մարդ է կենդանի բանաւոր, այլ եւ հրաշտակք եւ դեւք»: Զարմանալիորեն այս նախադասության ճշգրիտ հունարեն համարժեքը երկիցս գտնում ենք Գալիթի «Պորփյուրի ներածության մեկնության» մեջ. *οὐ μόνον γὰρ ὁ ἀνθρώπος ἐστὶ λογικὸν ἀλλὰ καὶ ἄγγελος καὶ δαίμων* (*Dav., in Isag, 85.17-18*), *οὐ μόνον γὰρ ὁ ἀνθρώπος λογικός ἐστὶν ἀλλὰ καὶ ἄγγελος καὶ δαίμων* (*Dav., in Isag, 99.15-16*). Երկու անգամ էլ դրանք արտացոլված չեն հայերեն թարգմանության մեջ: Ուրեմն «Սահմանք»-ի հունարեն բնագրում այս նախադասությունը պետք է որ սկզբնապես եղած լինէր: Սա նշանակում է նաեւ, որ Գալիթի երկու գրվածքների տեքստերի պատմությունը բավական խճճված է:

³⁴ Հմմտ. David the Invincible Philosopher, *Definitions and Divisions of Philosophy*, p. XIX-XX, R. Thomson, "Notes on the Armenian Version of David the Invincible's *Definitions of Philosophy*", p. 292-296:

(Դ. Պորփ., 34.24 Գալենոսի խոսքերը), Սոկրատես, Արիֆրիադես, Պլատոն (Դ. Պորփ., 40.6-7), Անտիսթենես (Դ. Պորփ., 38.18, 32), Պլուտարխոս (Դ. Պորփ., 6.12, 58.26), Այաքս եւ Տիդես (Դ. Պորփ., 42.27, 30-31), Հերակլես (Դ. Պորփ., 58.22-23, 62.7), Աքիլլես (Դ. Պորփ., 60.5), Օրեստեսն ու նրա նախնի Տանտարոսը, եւ Հիլլոսն ու նրա նախնի Հերակլեսը (Դ. Պորփ., 62.12-14):

Մյուս կողմից թարգմանչի բաց թողած կամ, պակաս հավանականությամբ, հետագա խմբագիրների հեռացրած, հատվածների թվում կա մեկը, որ նվիրված է «սեռականագոյն» (τὰ γενικώτατα) եւ «տեսակագոյն» (τὰ εἰδικώτατα) տարրերի հարաբերությունը, պարունակում է Ջեւին, Տանտարոսին, Պելոփոսին, Ատրեւսին, Ագամեմոնին եւ Օրեստեսին վերաբերող օրինակներ, եւ որում Ջեւը բնորոշված է որպէս «մարդկանց եւ աստվածների հայր» (Dav., in Isag, 153.14-154.19): Չի կարելի բացառել, որ այս հատվածի այդպիսի «հեթանոսական հունական» բովանդակությունն է հանդիսացել այն բաց թողնելու պատճառը:

2 Չուգահեռ գրվածքների վկայությունները

Շատ դեպքերում Արիստոտելի մյուս մեկնիչների տարբեր գրվածքների զուգահեռ տեղիները օգնում են հաստատելու հունարեն կամ հայերեն տեքստի անխաթարությունը: Մեզ հաջողվել է գտնել հետևյալ զուգահեռները:

2.1 Հունարեն տեքստի անխաթարությունը հաստատող վկայություններ

1) Դավիթի հետևյալ հատվածը համարժեք չունի թարգմանություն մեջ. κεφάλαια δὲ ταῦτα λέγονται, διότι τὸ κῦρος παντὸς τοῦ λόγου ἐπέχουσιν· ὥσπερ γὰρ ἡ κεφαλὴ τὸ κῦρος παντὸς τοῦ ζῶου ἐπέχει, διότι αἱ αἰσθήσεις ἐν αὐτῇ εἰσιν ἢ διότι τὴν βασιλεύουσιν τῶν αἰσθήσεων, φημί δὴ τὴν ὄρασιν, αὐτὴ ἔχει, τὸν αὐτὸν τρόπον καὶ ταῦτα τὰ λεγόμενα κεφάλαια τὸ κῦρος παντὸς τοῦ λόγου ἐπέχουσιν (Dav., in Isag, 80.7-11 «եվ գրանք կոչվում են գլուխներ, քանզի իշխում են ողջ գրվածքի վրա: Ինչպես գլուխն իշխում է ամբողջ կենդանու վրա, քանի որ զգայարանները նրանում են, եւ քանի որ այն պարունակում է զգայարանների թագուհուն, նկատի ունեմ տեսողությունը, նույն ձևով այսպես կոչված գլուխներն իշխում են ողջ գրվածքի վրա»): Կեղծ-էլիասի մեկնություն մի շատ նման հատված վկայում է, որ սա ուշ հավելում չէ Դավիթի հունարեն տեքստում (ps.-Elias, in Isag, 24.2):

2) Թարգմանություն մեջ ոչ մի համարժեք չունեցող մեկ այլ հատված. ἴστέον δὲ ὅτι ἄλλο ἐστὶ διάλυσις καὶ ἄλλο ἀνάλυσις· ἡ μὲν γὰρ διάλυσις ἐπὶ τῶν μερῶν λέγεται, ἡ δὲ ἀνάλυσις ἐπὶ τῶν τεσσάρων στοιχείων. διαφέρουσι δὲ τὰ μέρη τῶν τεσσάρων στοιχείων, ὅτι τὰ μέρη οἰκείαν περιγραφὴν ἔχουσι καὶ περιορισμένα εἰσὶ (καὶ γὰρ πε-

ριώρισται πόθεν ἕως ποῦ ἔστιν ἢ χεῖρ και πόθεν ἕως ποῦ ἔστιν ὁ πούς), τὰ δε τέσσαρα στοιχεῖα οὐκ ἔχουσι περιγραφὴν οὐδὲ εἰσι περιωρισμένα· οὐδὲ γάρ ἐστι περιωρισμένον πόθεν ἕως ποῦ ἐν τῷ ἀνθρώπῳ ἐστι τὸ ὕδωρ και πόθεν ἕως ποῦ ἢ γῆ και πόθεν ἕως ποῦ τὸ πῦρ και πόθεν ἕως ποῦ ὁ ἀήρ. ταῦτα μὲν ἐν τούτοις (Dav., in Isag, 89.15-23 «*եվ պետք է իմանալ, որ այլ բան է վերլուծությունը (analysis) եւ այլ տարալուծումը (dialysis), քանի որ «տարալուծում» ասվում է մասերի կապակցութեամբ, իսկ վերլուծություն՝ չորս տարրերի: Մասերը տարբերվում են չորս տարրերից, քանի որ մասերն ունեն իրենց սեփական գծագրությունն ու սահմանագատված են (քանզի սահմանագծված է, թե որտեղից որտեղ է ձեռքը եւ որտեղից որտեղ՝ ոտքը), իսկ չորս տարրերը չունեն գծագրություն, ոչ էլ սահմանագատված են: Քանզի սահմանագծված չէ, թե որտեղից որտեղ է մարդու մոտ ջուրը, եւ որտեղից որտեղ է հողը, եւ որտեղից որտեղ՝ հուրը, եւ որտեղից որտեղ՝ օդը: Այս բաների մասին այսքան»): Կեղծ-էլիասն ունի «վերլուծություն» եւ «տարալուծման» տարբերությունը բացատրող նման մի հատված (ps.-Elias, in Isag, 26.20-21), եւ դա հաստատում է, որ մեջբերվածը Դավիթի հունարեն տեքստում ուշ ներմուծություն չէ³⁵:*

3) «Որպէս յորժամ մարդոյ ասեմք յատուկ գոլ զծիճաղականն» (Դ. Պորփ., 10.21) հատվածում բացակայում է հունարեն համապատասխան հատվածի երկրորդ բաղադրիչը՝ տօ՛ւ մեն անθρώπου ἴδιον εἶναι τὸ γελαστικόν, տօ՛ւ δὲ ἵππου τὸ χρεμετιστικόν (Dav., in Isag, 85.6-7 «*որ մարդու հատկությունն է ծիճաղելու ունակությունը, իսկ ձիուն՝ խրխնջալու»*): Իսկ կեղծ-էլիասի մոտ կարգում ենք. λέγονται ἴδια, ὡς τὸ γελαστικὸν τῷ ἀνθρώπῳ, τὸ χρεμετιστικὸν τῷ ἵππῳ, (ps.-Elias, in Isag, 36.17 «*հատկություններ են կոչվում մարդու համար՝ ծիճաղելու ունակությունը, իսկ ձիուն՝ խրխնջալու»*³⁶:

4) Դավիթը խոսում է ճարտասանական տասներեք հարցադրումների մասին (Dav., in Isag, 83.26 *στάσεις*), նույն թիվն է նշում եւ կեղծ-էլիասը (ps.-Elias, 25.6), իսկ հայերեն թարգմանության մեջ «կացմունք» տասնչորսն են (Դ. Պորփ., 8.18-19): Պատճառը պարզ է. «գ» եւ «դ» տառերի շփոթությունը բոլոր ձեռագրերի հիմքում ընկած մայր ձեռագրում:

5) Հայերենում շփոթություն կա Դիոնիսիոսի եւ Պիսիատրատոսի միջև:

³⁵ Հմմտ. այլ նման դեպքեր. Dav., in Isag, 80.18-81.3 – ps.-Elias, in Isag, 24.4-5; Dav., in Isag, 83.13-15 – ps.-Elias, in Isag, 25.2-3; Dav., in Isag, 83.26 (02.12) – ps.-Elias, in Isag, 25.6; Dav., in Isag, 89.9-10 – ps.-Elias, in Isag, 26.14; Dav., in Isag, 96.4-9 – ps.-Elias, in Isag, 28.7; Dav., in Isag, 96.15-16 – ps.-Elias, in Isag, 28.8:

³⁶ Տե՛ս մեկ այլ նման դեպք. Dav., in Isag, 125.4-126.5 – Elias, in Isag, 52.28-53.15:

Պիսաստրատոսը բնորոշված է որպես «բռնաւոր սիկիւացւոց» (Գ. Պորփ., 4.36-6.1), իսկ քիչ հետո Դիոնիսիոսը հանդես է գալիս որպես աթենական գործիչ. «Արք աթենացիք, ոչ տացուք Դիոնիսի թիկնապահս, վասն զի եւ Պիսաստրատոս առեալ բռնացաւ» (այսինքն՝ բռնապետ դարձաւ, Գ. Պորփ., 18.1): «Արք աթենացիք» հայերեն տեքստի հավելումն է, եւ ստացվում է, որ Դիոնիսիոսի ճակատագիրը որոշվում է Աթենքում: Իրականում Պիսաստրատոսը Աթենքի բռնապետն էր, իսկ Սիկիւիայի Սիրակուզա քաղաքի բռնապետը Դիոնիսիոսն էր: Բռնապետի համար հունարենում «տիրաննոս» բառն է (μη δῶμεν τῷ Διονυσίῳ στρατόν, ἵνα μὴ τυραννήσῃ ὡς ὁ Πεισίστρατος, *Dav.*, in *Isag.*, 88.24-25), որ արխաիկ ժամանակներում միապետ կառավարիչ էր նշանակում, իսկ Արիստոտելի մոտ արդեն հանդես է գալիս բացասական իմաստով: Այս ճիշտ բնորոշումները պետք է որ սկզբնապես եղած լինեին հունարենում, ինչի մասին վկայում է Դավթի ուսուցիչ Օլիմպիոդորոսի «Փիլիսոփայության ներածութիւն» (համապատասխանում է Դավթի «Սահմանք»-ին) երկում նույն դրվագը պատմող հատվածը, որտեղ կարդում ենք. οὕτως οὖν Ἰοβάτης ὁ τῆς Λιβύης βασιλεὺς ἐραστής ἐγένετο τῶν Πυθαγορικῶν συγγραμμάτων καὶ Πτολεμαῖος ὁ ἐπίκλην Φιλάδελφος τῶν Ἀριστοτελικῶν καὶ Πεισίστρατος ὁ τῶν Ἀθηναίων τύραννος τῶν Ὀμηρικῶν καὶ χρημάτων δωρεαῖς ἔσπευδον ταῦτα συναγαγεῖν (*Olymp.*, Prol, 13.13-16՝ «այսպէս Լիբիայի թագավոր Իոբատեսը սիրեց Պյութագորասի, Փիլադելփոս կոչված Պտղեմեոսը՝ Արիստոտելի, իսկ Աթենքի բռնապետ Պիսաստրատոսը՝ Հոմերոսի գրվածքները, եւ ջանում էին հավաքել դրանք»): Իսկ Օլիմպիոդորոսի Պլատոնի մի ճառի մեկնության մեջ հիշատակվում է ἐν Συρακούσαις πρὸς Διονύσιον τὸν μέγαν τύραννον ὄντα (*Olymp.*, in *Alcibiad.*, 2.97-98՝ «Սիրակուզայի մեծ տիրաննոս Դիոնիսիոսը»):

2.2 Հայերեն թարգմանության անխաթարութիւնը փաստող զուգահեռներ

1) ներածական ութ «գլուխների» (κεφάλαια) շարքում երրորդն ու չորրորդն են «հարազատութիւնը» եւ «վերնագրի բացատրութիւնը» (το γνήσιον, ἢ αἰτία τῆς ἐπιγραφῆς, *Dav.*, in *Isag.*, 80.12). հայերենում հակառակ հերթականութիւնն է՝ «պատճառք մակագրութեան, հարազատութիւն» (Գ., Պորփ. 2.7-8): Էլիասի մեկնության մեջ նույնպէս «վերնագրի բացատրութիւնը» (ἢ αἰτία τῆς ἐπιγραφῆς, *Elias*, in *Isag.*, 38.32-39.3) նախորդում է «հարազատությանը» (τὸ γνήσιον, *Elias*, in *Isag.*, 39.4-19), նույնն է եւ կեղծ-էլիասի մոտ (*ps.-Elias*, 27.3-9, 10-13): Դավթի հայերեն տեքստի հերթականութիւնը հաստատվում է նաեւ հենց Դավթի հետագա շարադրանքով, որ նվիրված է գրվածքներին ընդհանրապէս եւ Պորփյուրի մասնավոր գրված-

քին (Դ. Պորփ., 2.16-6.19, 22.6-24.7):

2) «Իսկ ըստ շորրորդ յեղանակի լինին խորթը շարագրածք վասն բարեմտութեան աշակերտաց առ իւրեանց վարդապետսն» (Դ. Պորփ., 6.7-9), իսկ հունարենում կարգում ենք. διὸ εὐνοίαν τοῦ οἰκείου διδασκάλου (Dav., in Isag, 82.13-14 «իրենց ուսուցչի բարի վերաբերմունքի պատճառով»): Այն, որ հայերենն է ճիշտ, հաստատվում է Օլիմպիոդորոսի հետեւյալ հատվածով. διὸ εὐνοίαν τῶν μαθητῶν (Olymp., Prol, 13.8 «աշակերտների բարի վերաբերմունքի պատճառով»): Հիշենք նաեւ վերը մեջբերված հատվածը. «կամ յաղագս բարեմտութեան աշակերտաց, որք զիւրեանց շարագրածութիւնս իւրեանց վարդապետացն ճանեցին» (Դ. Ստոր., 222) եւ նրա հունարեն սկզբնագիրը. διὸ εὐγνωμοσύνην μαθητῶν τὰ οἰκεῖα συγγράμματα τοῖς οἰκείοις διδασκάλοις ἀνατιθέντων (Dav., in Cat, 128.2-3):

3) «Բայց տարրորդին եւ ճանաչին շարագրածք՝ թէ խորթը իցեն, թէ հարազատք, ըստ նիւթոյն եւ ըստ տեսակին³⁷: Ըստ նիւթոյն՝ ըստ յարմարման³⁸ եւ ըստ բառից. զի յարմարումն եւ բառք որպէս նիւթ են շարագրութեան: Իսկ ըստ տեսակի՝ ըստ մտածութեանց³⁹» (Դ. Պորփ., 6.15-19) – Διακρίνονται δὲ τὰ γνήσια συγγράμματα τῆς τε ὕλης καὶ τῷ εἶδει· τῆς ὕλης μὲν τῆς φράσει ἦγουν ταῖς λέξεσι, τῷ εἶδει δὲ τοῦτ' ἔστι τοῖς *νοήμασι (Dav., in Isag, 82.20-22): Հայերեն «ըստ տեսակի՝ ըստ մտածութեանց⁴⁰ «թույլ է սովել հունարեն թեորհմասի («փաստարկներով») ընթերցումն ուղղել **νοήμασι* («մտքերով»): Այդպիսի ուղղում թույլ են տալիս անել եւ Ամմոնիոսի ու Օլիմպիոդորոսի հետեւյալ հատվածները. εἰ νόθον ἢ γνήσιον τοῦ φιλοσόφου τὸ βιβλίον (πολλοὶ γὰρ αὐτῶν συντιθέντες ἐπέγραφον τῷ Ἀριστοτέλους ὀνόματι, οὗς ἐλεγκτέον ἐκ τε τοῦ εἶδους καὶ τῆς ὕλης· εἶδος μὲν οὖν ἔστιν ἡ ποικιλία τῶν νοημάτων...) (Ammon., in Cat, 8.2-4՝ «արդյոք փիլիսոփայի գիրքը կեղծ է, թե հարազատ⁴¹ (քանզի նրանցից շատերը, գրելով (գրքեր), Արիստոտելի անունով են կոչել դրանք, եւ նրանց պետք է ստուգել ձեւի եւ նյութի առումով. ձեւը մտքերի բազմազանությունն է)», եւ συνταγματικὰ δὲ καλοῦμεν ὅσα μετὰ τῶν νοημάτων καὶ λέξιν ἔχει κεκοσμημέ-

³⁷ Այստեղ տեսակ նշանակում է «ձեւ»:

³⁸ Այստեղ յարմարումն համապատասխանում է հունարեն «ոհ» բառին:

³⁹ Սա նախադասությունն է օժանդակ բայի բացթողումով. «ըստ ձեւի նշանակում է ըստ մտքերի»:

⁴⁰ 1976 թ. հրատարակության մեջ եզակիով է «մտածութեան». ուղղել ենք ըստ Մատենադարանի № 1746 ձեռագրի՝ «մտածութեանց»:

⁴¹ Սա հաստատում է նաեւ «Թէ խորթը իցեն, թէ հարազատք» հատվածի անխաթարությունը, մինչդեռ Դավթի հունարեն մեջբերված հատվածում ունենք միայն «հարազատ գրվածքներ» (τὰ γνήσια συγγράμματα).

ւնի և փրօսին քեռալլապիսմէնի յընթացումս Եւրոպայի քաղաքացիացիս (Olympe., ProI, 6.30-33՝ «Կանոնաւոր ենք անվանում (այն գրվածքները), որոնք մտքերի հետ մեկտեղ ունեն նաեւ գրվածքներին վաշխող զարդարուն ոճ եւ գեղեցիկ արտահայտչաձեւ»):

4) ἀχώριστον (συμβεβηκός) δὲ ὡς τὸ λευκὸν τοῦ κύκνου καὶ τὸ μέλαν τοῦ κόρακος (Dav., in Isag, 84.32-85.3՝ «անանջատական՝ ինչպես կարապի սպիտակութիւնն ու ագռավի սեւութիւնը»), մինչ հայերէն թարգմանութիւնն է. «անանջատական՝ որպէս արծառնին, պնչատ» (Գ. Պորփ., 10.18-19՝ «ինչպես կեռքիթ, կճատաքիթ»), որը հաստատուում է Պորփուրի տեքստով. τὸ δὲ γρυπὸν ἢ σιμὸν εἶναι κατὰ συμβεβηκός (Porph. Isag, 9.13-14). Կարելի է վերականգնել հունարէն սկզբնական տեքստն այսպէս. *ἀχώριστον δὲ ὡς γρυπὸν σιμόν:

5) «գՅամիթոս. վասն զի աստուածաբանութեան⁴² [...] պարագէր» (Գ. Պորփ., 22.21-22), սակայն թերի տա թե՛ս անշոքաւոր (Dav., in Isag, 92.6-7՝ «աստվածային բաներով էր պարագում»): Հայերէն ընթերցումը հաստատուում է հետեւյալ զուգահեռով.՝ *Ἰάμβλιχος* [...] ἐθεολόγησεν (ps.-Elias, 27.7՝ «Յամիթոսն աստվածաբանում էր»): ուրեմն կարող ենք վերականգնել հունարէնը. *περὶ θεολογίαν անշոքաւոր:

6) «Քանզի ասես կարող գոյ գրեզ ինքն՝ կամ ի սոսկ մտածութեանց գոյ գառաշիկայս, որպէս կարծեցին գոյ շնականքն, եւ կամ ենթակայացեալք, խնդրել եւ քննել» (Գ. Պորփ., 40.21-24): Հունարէնը (Dav. in Isag, 110.23-24) չունի «շնականներին» (կինիկայն փիլիսոփաներին) վերաբերող միջանկյալ նախադասութիւնը. *ὥσπερ ἐνόμισαν εἶναι οἱ Κυνικοί, սակայն այդպիսին պետք է որ եղած լինէր, հմմտ. էլիասի մոտ. οἱ μὲν γὰρ ἔλεγον ὑφεστάναι τὰ γένη καὶ τὰ εἶδη, ὡς Πλάτων καὶ Ἀριστοτέλης [...], Ἀντισθένης δὲ ὁ Κυνικός ὁ τοῦ Διογένους διδάσκαλος ἔλεγε μὴ εἶναι τὰ καθόλου (Elias, in Isag, 47.12-15՝ «քանզի ոմանք ասում էին, որ սեւեր ու տեսակներ գոյութիւն ունեն, ինչպէս Պլատոնն ու Արիստոտելը..., իսկ Գիոգենեսի աշակերտ շնական Անտիսթենեսն ասում էր, որ հանրականներ չկան»):

7) Հունարէնի կետեղանց հատվածը՝ նվիրված «կեսի» (τὸ ἥμισυ) եւ «կրկնակի» (διπλάσιον) հարաբերութեանը (Dav., in Isag, 111.32-112.8), ամփոփված է թարգմանութեան մի կարճ նախադասութեամբ. «զի՞նչ են բաղադրանութիւնքն՝ կրկնապատկին առ կէսն, եւ կիսոյն առ կրկնապատկին» (Գ.

⁴² Հրատարակութեան «աստուածաբանութեամբ» ընթերցումը փոխարինել ենք ձեռագրերի մեծամասնութեան ընթերցմամբ:

Պորփ., 42.33-34)⁴³, որը շատ մոտ զուգահեռ է գտնուում Հովհաննես Դամասկացու «Դիալեկտիկայում»։ օς δὲ σχέσιν ἔχοντα πρὸς ἄλληλα [...], τὸ γὰρ μέγα πρὸς τὸ μικρὸν λέγεται μέγα καὶ τὸ διπλάσιον πρὸς τὸ ἡμῖσιν (Damasc., Dial., 50.73-76 «որպես իրար հետ հարաբերություն ունեցող բաներ... քանզի մեծը փոքրի համեմատ է կոչվում մեծ, իսկ կրկնակին՝ կեսի համեմատ»։ Այս զուգահեռը վկայում է, որ հայերեն տարբերակն առաջնային է, իսկ հունարենը հետագայում է ընդարձակվել։

8) μὴ δῶμεν τῷ Διονυσίῳ στρατόν, ἵνα μὴ τυρανῆσθαι ὡς ὁ Πεισίστρατος (Dav., in Isag, 88.24-25 «չտանք Դիոնիսիոսին զորք, որպեսզի բռնակալ չդառնա, ինչպես Պիսիստրատոսը»), իսկ հայերենն է «ոչ տաջուք Դիոնիսի թիկնապահս, վասն զի եւ Պիսիստրատոսս առեալ բռնացաւ» (Գ. Պորփ., 18.1-3), որի վերականգնված համարժեքը կլիներ. *μὴ δῶμεν τῷ Διονυσίῳ σωματοφύλακας, ἐπειδὴ καὶ ὁ Πεισίστρατος λαβὼν ἐτυράννησεν, որը հաստատվում է հետեւյալ համանման մի հատվածով. μὴ δώσομεν Διονυσίῳ φυλακὴν σωμάτων, ἐπειδὴ καὶ Πεισίστρατος λαβὼν ἐτυράννησεν (ps.-Eliás 26.11 «չտանք Դիոնիսիոսին թիկնախուսք, որովհետեւ եւ Պիսիստրատոսը ստանալով, բռնակալ դարձավ»):

9) Հոմանունությունը բացատրելիս պետք է երեք բան անել, մասնավորապես. τρίτον τὴν περὶ τούτου ἐμφανίσαι διδασκαλίαν (Dav., in Isag, 122.32-33 «երրորդ, բացատրել նրան վերաբերող ուսմունքը») – «երրորդ, ստորագրել եւ սահմանել գալն, շղթագս որոյ բանն է» (Գ. Պորփ., 58.11-12 «ստորագրել» նշանակում է «ուրվագծել, նկարագրել»)։ հմմտ. Eliás, in Isag, 51.26-27 διορίσαι περὶ οὗ ὁ λόγος κάκεῖνο ὑπογραφῆς ἢ ὀρισμοῦ ἀξιούσιν («որոշել, թե ինչի մասին է խոսքը, եւ արժանացնել այն նկարագրություն եւ սահմանման»)։

10) ἐπειδήπερ ἀνωτέρω ἐζητήσαμεν ὅτι ἀρετὴ ὀρισμοῦ ἐστὶ τὸ μόνω καὶ τὸ αὐτὸ ἀρμόζειν ἤτοι καὶ ἀντιστρέφειν (Dav., in Isag, 133.8-9 «վերը մենք պարզաբանեցինք, որ սահմանման արժանիքն է նույն բանին համապատասխանելը եւ հակադարձվելը»), իսկ հայերենում ասված է. «առաքինութիւն սահմանի ասացաք գոյ զանդրադարձիւն առ սահմանելիւն» (Գ. Պորփ., 68.1-2), որի ճշգրիտ հունարեն համարժեքը կլիներ. *ἀρετὴ ὀρισμοῦ εἶπομεν εἶναι ἀντιστρέφειν πρὸς τὸ ὀριστόν· Հավանաբար ակնարկվում է «Սահմանքի» հետեւյալ տեղիւն. τέλειος ὀρισμός ἐστὶν ὁ ἀντιστρέφω πρὸς τὸ ὀριστόν (Dav., ProI, 19.10-11) – «կատարեալ սահման այն

⁴³ Հունարեն համարժեքը կլիներ. *τί δέ ἐστι σχέσεις· τὸ διπλάσιον πρὸς ἡμῖσιν καὶ ἡμίσεος πρὸς διπλάσιον.

է, որ անդրադարձի առ սահմանելին» (Դ. Սահմ., 46.9-10):

11) ὁ ἄνθρωπος ζῶν ἐστὶ γελαστικόν, ὀρθοπεριπατητικόν (Dav., in Isag, 142.14) – «մարդ է հետեւակ երկոտանի, ուղղորդագնաց, լայնեղունկն» (Դ. Պորփ., 78.15-16): Հունարենը չունի *πλατύωνυχος (= «լայնեղունկն»), սակայն այն վկայված է Դավթի «Սահմանքում». ἄνθρωπος ἐστὶν ὀρθοπεριπατητικόν γελαστικόν πλατύωνυχον (Dav., ProI, 12.16-17) – «մարդ է ուղղորդագնաց, ծիծաղական, լայնեղունգն» (Դ. Սահմ., 28.33), եւ կեղծ-էլիասի մոտ. λέγει τὸν ἄνθρωπον εἶναι ὀρθοπεριπατητικόν πλατύωνυχον γελαστικόν (ps.-Elias, 31.5 «նա կասի, որ մարդը ուղղահայաց քայլող է, լայնեղունգ եւ ծիծաղելու ունակությամբ օժտված»):

12) Հայերեն թարգմանության մեջ «շնչական» եւ «անշունչ», «զգայուն» եւ «անզգայ» «գոյացութիւն»-ների վեց հնարավոր «լծակցութիւն»-ների (Դ. Պորփ., 135.31-136.2, հմմտ. ἔμψυχον, ἄψυχον, αἰσθητικόν, ἀναίσθητον, Dav., in Isag, 186.20) մասին ասված է. «որոց տրամագծութիւնք լինին այսպէս» (Դ. Պորփ., 136.4-5): Սրանից հետո բազմաթիվ ձեռագրեր (Մատենադարանի №№ 1691, 1746, 8722, 1716, 2326, 1766, 1750, 1765, 2652, 1811, 4006, 1739, 4027, 1740, Վիեննայի №№ 263, 656) պարունակում են այդ հարաբերությունները պատկերող դիագրամներ: Հունարենը վերջին հատվածի համարժեք (*ὧν διαγράμματα εἰσιν οὕτως) չունի: Սակայն հմմտ. նման կոնտեքստում. καθὼς τὸ διάγραμμα τοῦτο δηλοῖ (Elias, in Isag, 13.16-17 «ինչպես ցույց է տալիս այս դիագրամը»): Այսպիսով, Դավթի սկզբնագրում պետք է որ նման նախադասութիւն եղած լիներ:

13) Տասներկու դեպքում հայերենում մեջբերումներ կան Պորփյուրից, մինչ հունարենում համապատասխան մեջբերումները կամ բացակայում են, կամ էլ լրիվ չեն: Սա նշանակում է, որ հայերենը հունարեն սկզբնագրի պատմության մի որոշակի փուլի արտացոլումն է, կամ էլ որ հայերեն թարգմանության ուշ խմբագիրները լրացրել են մեջբերումները Պորփյուրի հայերեն թարգմանութիւնից: Առնվազն երեք դեպքում (Դ. Պորփ., 62.23-24, 94.4-5, 110.11-13), որոնցում հունարենը չունի Պորփյուրից համապատասխան մեջբերում (երկրորդ դեպքում մեկ այլ մեջբերում է Dav., in Isag, 157.18), առաջին հնարավորութիւնն ավելի հավանական է թվում: Ուրեմն միանգամայն հավանական է, որ սկզբնագրի Դավթի հունարեն տեքստում եղել են համապատասխան մեջբերումներ:

Հունարեն սկզբնագրի եւ հայերեն թարգմանության միջեւ տարբերութիւնների ծագումը բացատրելու մեր փորձերը դույզն-ինչ հավակնութիւն չունեն սպառիչ լինելու. ավելին, դրանք նույնիսկ վիճակագրական արժեք չեն կարող ունենալ: Սրանք պարզապէս այն դեպքերն են, երբ մեզ հաջողվել է բա-

ցատրություն կամ այլ տեքստերում զուգահեռ նյութ գտնել: Խնդրո առարկա երկու ծավալուն տեքստերի միջև տարբերությունների ողջ բազմության քննությունը մեծագույն ջանքեր պահանջող դժվարին խնդիր է:

Ակնհայտ է, որ Դավթի երկի հետագա բաղդատությունը Արիստոտելի մյուս մեկնիչների զուգահեռ հունարեն տեքստերի, հատկապես Ամմոնիոսի, էլասի եւ կեղծ-էլիասի «Ներածության» մեկնությունների հետ, բացահայտելու է շատ ուրիշ հետաքրքրական փաստեր, որոնք կարող են բացատրել Դավթի Անհաղթի «Պորփյուրի Ներածության վերլուծության» հունարեն սկզբնագրի եւ հայերեն թարգմանության տարբերությունները:

Զուգահեռ հատվածների հետ համադրումներից մեր ընդհանուր եզրահանգումն այն է, որ ինչպես հունարեն սկզբնագիրը, այնպես էլ հայերեն թարգմանությունը մեզ են հասել խմբագրված տեսքով, ընդ որում հայերեն տեքստը խմբագրվել է 1280 թվականից առաջ, երբ գրվել է Մատենադարանի 1746 ձեռագիրը:

Հապավումներ

Գ. Պորփ. – Դավթ Անյաղթ, Վերլուծութիւն «Ներածութեանն» Պորփիրի, համահավաք քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Ս. Արեւշատյանի, Երեւան, 1976

Գ. Սահմ. – Դավթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, քննական բնագիրը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Ս. Ս. Արեւշատյանի, Երեւան, 1960

Գ. Ստորոգ. – Դավթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը եւ առաջաբանը Ս. Ս. Արեւշատյանի, Երեւան, 1980, էջ 193-300

Պորփ. – Դավթի Անյաղթի փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ Թուղթ Գիւտայ առ Դավթ, ի Վենետիկ, 1932, էջ 133-156

Ammon., in *Cat – Ammonii in Aristotelis Categoriae commentarium*, ed. A. Busse (CAG, IV 4), Berolini 1904

Damasc., *Dial – Die Schriften des Johannes von Damaskos, vol. 1 (Patristische Texte und Studien)*, ed. B. Kotter, Berlin 1969, p. 101-142: *Dialectica sive Capita philosophica (recensio fusior)*.

Dav., in *Isag – Davidis in Porphyrii Isagogen Commentarium in Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium*, ed. A. Busse (CAG, XVIII, 2), Berolini 1904

Dav., *Prol – Davidis Prolegomena Philosophiae, in: Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen Commentarium*, ed. A. Busse (CAG,

XVIII, 2), Berolini 1904

Dav., *in Cat – Eliae (olim Davidis) in Aristotelis Categorias commentarium*, in: *Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias Commentaria*, ed. A. Busse (CAG, XVIII, 1) Berolini 1900

Elias, *in Isag – Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria*, ed. A. Busse (CAG, XVIII, 1), Berolini 1900

Olymp., *in Alcibiad – Olympiodorus, Commentary on the First Alcibiades of Plato*, ed. by L.G. Westerink, Amsterdam 1956

Olymp., *Prol – Olympiodori Prolegomena et in Categorias commentarium*, ed. A. Busse (CAG, XII 1), Berolini 1902

Porph., *Isag – Porphyrii Isagoge et in Aristotelis Categorias commentarium*, ed. A. Busse (CAG, IV 1), Berolini 1887

ps.-Elias, in Isag – Pseudo-Elias (Pseudo-David), Lectures on Porphyry's Isagoge, Introduction, text and indices by L. G. Westerink, Amsterdam 1967.

